

ԴԱՅԵՆԸ Պ. Հ. ՄԱՐԶԱՐՅԱՆ

ԿՆՈԶ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

1946թ



ԴՐԱՅԻ Պ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայ.

673.99

0-35

Կ Ն Ո Չ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

~~Ա 160~~
Ա 164



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ, Ա. Խ.

1946

ДОЦ. П. А. МАРКАРЯН

Гигиена женщины

(на армянском языке)

Армгиз Ереван 1946

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առողջապահությունը — հիգիենան—առողջությունը պահպանելու գիտություն է. կնոջ հիգիենան ուշ սումնասիրում է կնոջ առողջությունը պահպանելու միջոցները, այլ կերպ ասած՝ նրա հիմնական խնդիրն է կանխել կանանց զանազան հիվանդությունները:

Կինն իր կյանքի ընթացքում վերապրում է մի, քանի շրջան. այդ շրջանների հետ կապված են զանազան վիտիխություններ ու օրգանիզմի տարբեր գործունեություն, որոնք և պահանջում են յուրահատուկ խնամք: Այդ շրջանները հետեւյալներն են.

1. Կնոջ հիգիենան մինչև արբունքը (սեռական հաստացումը):

2. Արբունքի և սեռական կյանքի հիգիենա:

3. Հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանի հիգիենա:

4. Կիմակտերիկ շրջանի և ծերության հիգիենա:

Կնոջ առողջապահությունը կյանքում ճիշտ իրավուրծելու համար անհրաժեշտ է գիտենալ նաև սեռական մասերի կառուցվածքը և գործունեությունը:

ԿՆՈՋ ՍԵՐԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ
ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Կնոջ սեռական մասերը կազմված են արտաքին և ներքին օրգաններից. արտաքին օրգանները աչքով տեսանելի մասերն են—մեծ և փոքր ամոթաշրթերը, ծլիւկը, կուսաթաղանթը և հեշտոցը. վերջինիս միջոցով արգանդը միանում է արտաքին մասերի հետ:

Ներքին սեռական օրգաններն են—արգանդը, փողեցը և ձվարանները, որոնք գտնվում են կոնքի խոռոչում։ Ձվարանում գտնվում են բշտիկների մեջ պարփակված անհաս ձվարջիջներ (ձվիկներ), հասունանալուց հետո բշտիկը պատուվում է և ձվիկը ընկնում է ձվարանի մակերեսի վրա, որովայնի խոռոչում։ Այդպիսի ձվազատում կատարվում է ամիսը մեկ անգամ։

Արգանդի և ձվարանի միջև գտնվում են փողեցը (դրանք խողովակներ են, ամեն կողմից մեկական հատ)։ Փողի մեջ ծայրը միացած է արգանդին, իսկ մյուս ծայրը ծոպածե, փնջի պես, բացվում է ձվարանի վրա։ Երբ ձվարջիջը (ձվիկը) հասունանալուց հետո ընկնում է ձվարանի մակերեսը, փողի այդ ծոպերի միջոցով նա քաշվում է փողի ներսը և այնուհետև փողի թարթիչների ու կծկումների միջոցով բերվում է ղեպի արգանդը։ Նախքան արգանդ հասնելը, փողի մեջ ձվիկը հանդիպում է արական սեռական բջիջին—սերմնորդին։ Նրանք ճուղվում են միմյանց հետ և այդպիսով կատարվում է բեղմնավորում։ Այնուհետև այդ բեղմնավորված ճուն շարունակում է փողի միջոցով հասնել արգանդի խոռոչը և կպչել նրա լորձաթաղանթի որևէ ծալքին։ արգանդի խոռոչում բեղմնավորված ճուն — սաղմը շարունակում է իր հասունացումը մինչև հղիության վերջը։ այդ պատճառով էլ արգանդը սկսում է արագորեն մեծանալ և իր առատ զարկերակայինի ու երակային ցանցի միջոցով սնել սաղմին։

Արգանդը ոչ հղի վիճակում 9 սմ։ Երկարությամբ մի օրգան է, կազմված է մարմնից և վղիկից, նրա խոռոչը պատած է լորձաթաղանթով։ Վղիկը բացվում է հեշտոցի մեջ։ Հարաբերության ժամանակ սերմնորդները, որոնց թիվը մի քանի հարյուր միլիոն է և որոնք շատ աշխուժ շարժումներ ունեն, հեշտոցից վղիկի միջոցով անցնում են արգանդի խոռոչը, այստեղից էլ փողեցը, ուր հանդիպելով ձվիկին, ինչպես վերևում ասացինք, նրանցից որևէ մեկը բեղմնավորում է այն, առաջ սույն փողի միջոցով բեղմնավորված ճուն փո-

իսադրվում արգանդը, մնացած սերմնորդները ներծըծ-վում, ոչնչանում են: Եթե զանազան պատճառներով (օրինակ՝ բորբոքումներից առաջացած վնասվածքներ, փողերի փակ կամ նեղ լինելու դեպքում, ձվարանների հիվանդությունների ժամանակ) արական սեռական բջիջը — սերմնորդը չի կարողանում հանդիպել ձվիկին, կինը մնում է ամուլ: Իսկ եթե հանդիպումը այնուամենայնիվ հաջողվում է, բեղմնավորված ձուն հնարավորություն չի ունենում շարժվել դեպի արգանդը, կանգ է առնում փողում և առաջանում է արգանդից գուրս հղիություն: Արգանդի բորբոքումների դեպքում, նրա լորձաթաղանթը այնքան է փոփոխվում, որ սաղմը չի կարողանում ամրանալ արգանդին և տեղի է ունենում վիժում:

Ի տարբերություն արական սեռական օրգաններից, կնոջ սեռական օրգանները և որովայնի խոռոչը բաց են դեպի արտաքին աշխարհը: Այդ հաղորդակցությունը արտաքին աշխարհի հետ տեղի է ունենում հեշտոցի, արգանդի, փողի միջոցով: Վերջինիս մեկ ծայրը, ինչ պես վերևում ասացինք, բացվում է որովայնի խոռոչում, իսկ մյուսը՝ արգանդում: Այս հաղորդակցության շնորհիվ վարակը (միկրոբները) կարող է անցնել թե ներքին օրգանները և թե որովայնի (փորի) խոռոչը, առաջացնելով ծանր բորբոքումներ, իսկ երր վիժում առաջացնելու նպատակով վնասում են արգանդի լորձաթաղանթը, վարակը թափանցում է արյան անոթների մեջ և հաճախ առաջանում արյան մահացու վարակում կամ կանանց այլ հիվանդություն:

ՎԻԺՈՒՄԸ*) ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1920 թվի նոյեմբերի 18-ի դեկտեմբերի մեր երկրում վիժումը լեզալիզացիայի ենթարկվեց, կամ ինչպես սո-

*) Վիժում կամ աբորտ միանույն հասկացողությունն է:

վորաբար ասում են, աբորտն ազատ հայտարարվեց; ի՞նչն էր այդ գեկրետի ընդունման պատճառը: Արդյոք ա՞յն, որ մենք վիժումն անվնաս բան ենք համարել: Իհարկե ոչ, սակայն մեր երկիրը տնտեսապես շատ հետամնաց էր, ծնողների համար հեշտ չէր շատ երեխաներ ունենալ և խնամել: Քաղցն ու դժվարությունները հաճախ տանում էին այդ երեխաներին: Կարիքը քայլայում էր նաև հենց իր՝ կնոջ առողջությունը: Այդ պայմաններում վիժումը չարիքներից փոքրագույնն էր, այն հնարավորություն էր տալիս փոքրաթիվ դարձնել ընտանիքը և միևնույն ժամանակ ազատել կնոջը տղետ ու շահամոլ մարդկանցից, որոնց դիմում էր կինը՝ հզիությունից ազատվելու համար: Անշուշտ, շատ ավելի քիչ է վիժման պատճառած վնասը, եթե վիժումը կատարվում է հիվանդանոցներում, մասնագետ բժիշկների ձեռքով: Հենց այդ է պատճառը, որ բուրժուական երկրներում վիժումից առաջացած մահացության տոկոսը շատ ավելի բարձր է, քան մեր երկրում:

Սակայն նույնիսկ ամենափորձված մասնագետի ձեռքով և հիվանդանոցային ամենաիդեալական պայմաններում կատարված վիժումն էլ առանց հետեվանքների չի անցնում: Վիժումը կարող է բարդություններ առաջացնել հենց օպերացիայից անմիջապես հետո, կամ շատ ավելի ուշ:

Անմիջական բարդություններն են (10—11 տոկոս) արյունահոսությունը, արգանդի վնասումը և վարակումը: Արյունահոսությունը հյուծում է կնոջը: Այդ ավելի շատ լինում է զաղանի վիժումի ժամանակ, երբ անփոք արորտարարը կնոջ արգանդում թողնում է սլողի մասեր, որոնք քայլայիլով, երկարատև արյունահոսությունները ևս մեծ մասամբ զաղանի վիժման գեղքում են լինում: Այդ գեղքում պատովում է արգանդը, իսկ հաճախ վնասավում են նաև աղիքները և արյունահոսություն է առաջանում որովայնում, որից ուղղակի մահ

կամ արյան վարակում է առաջանում : Արդանիը վնաս-
վելու դեպքում մահացության տոկոսը հասնում է
26—31-ի : Վիժման հետևանքով վարակում էլ է առա-
ջանում : Խիստ հաջող դեպքերումն է միայն վիժումն
առանց բարդության վերջանում : Վիժման հեռավոր
բարդությունները կազմում են 28—29 տոկոս : Կինը
կարող է ամուլ դառնալ իր ամբողջ կյանքում : Կարող
է առաջանալ սեռական հիպեստեզիա—թույլ զգայու-
նություն սեռական կյանքի նկատմամբ (3,1 տոկոս),
փոխվում է կնոջ ընդհանուր տեսքը, ժամանակից առաջ
կինը թառամում, գունատվում է, դեմքին կնծիոներ
են առաջանում, մազերը թափնյում են, սպիտակում և
այլն : Որոշ դեպքերում խանգարվում է ներվային և
չողեկան հավասարակշռությունը, առաջանում է հի-
շողության թուլություն, մտավոր դեպքեսիա, անկտ-
յուն պսիխիկա, աշխատունակության անկում, ներլաս-
տենիա, հիստերիա, կորչում է հետաքրքրությունը դա-
պի կյանքը և այլն :

Վիժումը վատ է անդրադառնում նաև հետագա
ծննդաբերությունների վրա : Վիժումներ ունեցած կա-
նանց ծննդաբերության ցավերը թույլ են լինում,
ծնունդը երկարում է, ընկերքը հաճախ չի ընկնում
(3—4 անգամ ավելի դեպքերում, քան վիժում չունե-
ցողների մոտ), ծնունդից հետո 5—6 անգամ ավելի
արյունահոսություն է լինում, քան վիժում չունեցող
ների մոտ, 2,5 անգամ ավելանում են օպերատիվ մի-
ջամտությունները, որոնք իրենց հերթին են բարդու-
թյուններ են առաջացնում : Վիժումների հետևանքով
հետագա ծննդաբերությունների ժամանակ կարող է
մահացու արյունահոսություն առաջանալ : Վիժումը
հանդիսանում է նաև արտարգանդային հղիություննե-
րի պատճառներից .մեկը : Վիժում կատարած կանանց
մոտ ավելի հաճախ են պատահում չարորակ ուռուցք-
ներ : Վիժումների հետևանքով նկատվում են նաև այլ
օրդանների հիվանդություններ, ինչպես օրինակ՝ թո-
քերի տուբերկուլյոզի պրոցեսի սրացում, միզապարկի

Ա Երիկամի բոլցոքում և այլն: Վերջապես, վիճում ներն այնքան են փոփոխում՝ արդանդը և կնոջ հորմոնալ սիստեմը, որ հետագայում հղությունները այլք չեն պահպանվում և ինքնուրույն վիճումներ են առաջանում:

ՍՍՌՄ-ը հանդիսանում է աշխարհում միակ Երկիրը, ուր կինը լիովին ազատագրված է և իր իրավունքներով հավասարեցված է տղամարդուն: Ստալինյան կոնստիտուցիայի 122 հոդվածը ոչ միայն կնոջը տալիս է տղամարդուն հավասար աշխատանքի, հանգստի և կրթության իրավունք, այլև նրա համար ապահովում է ուել հնարավորություն՝ օգտվելու այդ իրավունքներով:

1920 թվականի համեմատությամբ, դեռ սրանից 10 տարի առաջ, հսկայական փոփոխություններ էին առաջացել մեր երկրում: Արմատապես փոխվել են ընակչության տնտեսական և կենցաղային պայմանները, մայրության և մանկության պահպանության հիմնարկների ցանցն ընդգրկել է գյուղերը և քաղաքները, մանուկներն ապահովվում են պետության օրենքներով: Շարունակել կնոջ առողջության համար վնասակար վիճումները անհնարին էր, ուստի մայրության և մանկության պահպանության բազմաթիվ միջոցառումներից մեկը հանդիսացավ ՍՍՌՄ-ի կենտղործկոմի և ժողկոմսովետի 1936 թվի հունիսի 27-ի որոշումը, որով արդելիքցին վիճումները և միաժամանակ ուժեղացվեց մայրերի տնտեսական և իրավական օգնությունը: Արդելիք վիճումը, Սովետական պետությունը դրանով ապահովեց աշխատավոր կնոջ առողջությունը և պաշտպանեց սոցիալիստական հասարակության շահերը:

Մայրության և մանկության նկատմամբ մեր պետության կողմից ցուցաբերվող հոգատարությունն իր նոր ակնհայտ արտահայտությունը գտնվի անգամ Հայրենական Մեծ պատերազմի օրերին ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի 1944 թվի 8/7 հրամանագրում: Այս հրամանագրով Սովետական օրենսդրությունը էլ ավելի

ամբացըեց ամուսնության, ընտանիքի և խնամակալության խնդիրները, հղիների աշխատանքի պաշտպանությունը, սոցիալական ապահովագրությունը, պարտադիր արձակուրդ սահմանեց յուրաքանչյուր կնոջ համար՝ 35 օր ծննդից առաջ և 42 օր ծննդից հետո (իսկ բարդացած ծնունդներից հետո 56 օր) և ստեղծեց մի շաբթ այլ ռեալ պայմաններ մայրության և մանկության պահպանության գործում:

ՍՍՌԴՄ աշխարհում միակ երկիրն է, ուր գոյություն ունի հիմնարկների այնպիսի ներդաշնակ սիստեմ, որն ապահովում է մոր և մանկան առողջության պաշտպանությունը, կնոջը հնարավորություն է տալիս իրագործել իր մայրական այդ կարևորագույն սոցիալական ֆունկցիան և պաշտպանել մանկան շահերը:

1. ԿՆՈՉ ՀԻԳԻԵՆԱՆ ՄԻՆՉԵՎ ԱՐԲՈՒՆՔԸ

Կնոջ հիգիենան սկսվում է կյանքի առաջին իսկ օրերից. նորածնի պորտալարի մնացորդը մինչև նրա ընկնելը պետք է բուժել որպես վիրաբուժական վերք, մաքուր, ախտահանված թանզիֆով փաթաթել և բինտով կապել. մինչև պորտի ընկնելը լավ է չողացնել, սակայն մաշկի զանազան հիվանդություններից, առաջին հերթին՝ հարածից խուսափելու համար անհրաժեշտ է թերերի տակը, հետույքը, ազդրերը ու սեռական մասերը մաքրել գոլ ջրով և չորացնել: Խորհուրդ է տըրքում երկրորդ շաբաթից սկսած լողացնել ամեն օր: Լողացնելու միջոցով բացվում են մաշկի ծակոտիները ու երեխան ավելի ազատ է շնչում: Երբեմն նորածին աղջկա սեռական ճեղքից արտաթորվում է լորձ, որը միանալով մեղին, կղկղանքի մնացորդներին, գրգռում է սեռական մասերը, հարակից մաշկը, և առաջացնում բորբոքում: Այդպիսի դեպքերում պետք է զգուշությամբ լվանալ, չորացնել, ապա ցանել տալի կամ քսել որևէ բուսական ախտահանված յուղ: Երբեմն նորածինների մոտ ուռչում են կրծքագեղձերը, նրանցից

արտաթորվում է խեժի պես հեղուկ. այս երևույթը
մեծ մասամբ անցնում է անվտանգ, սակայն անխնամ
վերաբերմունքից, տրորելուց, ճնշումից և վարակի
ներթափանցումից կարող է բորբոքում առաջանալ:
Վերջին դեպքում անհապաղ պետք է դիմել բժշկին:

Նորածնի ամենավտանգավոր հիվանդությունը դա
հնորրեային վարակումն է (սուսանակ): Երեխան
ծնվելիս մոր հետոցի հյութը, որը լի է մանրեներով,
քսվում է նրա աչքերին, որի հետեւանքով աչքը բոր-
բոքվում է և կարող է նույնիսկ կուրանալ. այդպիսի
դժբախտությունից խուսափելու համար այժմ անխտիր
բոլոր նորածինների աչքերը գցում են մեկ-երկու կա-
թիլ 1 տոկոսանոց լյապիս, որը ոչնչացնում է սուսա-
նակի, վարակը: Այնուամենայնիվ, եթե դրանից հետո
էլ նորածնի աչքերը բորբոքվում են, պետք է անմիջա-
պես ցույց տալ բժշկին: Լինում են նաև դեպքեր, եթե
երեխան սուսանակով հիվանդէ մոր հետ քնում է մի
ընդհանուր անկողնում և վարակվում մոր թարախից:
Առաջանում է երեխայի միզային և սեռական մասերի
թարախային ծանր բորբոքում, որը խիստ ցավ է պատ-
ճառում երեխային. այդպիսի դեպքերում հիվանդու-
թյունը, եթե բժշկին չեն դիմում, երկարում է և կա-
րող է վատ հետեւանքների հասցնել: Անհրաժեշտ է
յուրաքանչյուր այդպիսի կասկածելի դեպքում նույն-
պես դիմել բժշկին:

Մանկական վաղ հասակի հիվանդություններից
կարեւը նշանակություն ունի բախիտ կոչված հիվան-
դությունը: Սա զլիսալորապես արտահայտվում է
ստորին ծայրանդամների, կոնքի, ողնաշարի և գլխի
վրա. ոսկրերի կրացումը ընթանում է անբավարար,
որի պատճառով նրանք մնում են փափուկ, ապա դրա
հետեւանքով սկսում են տձեւանալ: Բախիտի հետեւան-
քով առաջացած նեղ և անկանոն կոնքը մեծ բարդու-
թյան է ծննդաբերության համար և եթե այդ դեֆոր-
մացիան ուժեղ է, ծննդաբերությունը նորմալ ձևով չի
կատարվում: Բացի դրանից, բախիտը կանգնեցնում է

ամբողջ օրդանիզմի, ապա նաև արդանդի ու ձվարան-ների զարգացումը, որը հետագայում կարող է տալ դաշտանի անկանոնություն, ամլություն և այլ երե-գույթներ։ Իախիտն առաջանում է գլխավորապես ար-հետական ձեռվ սնվող երեխաների մեջ, խոնավ, արե-ից զուրկ բնակարաններում և ալկոհոլիկ ծնողներից։ Ե-րեխային բախչական փրկելու համար անհրաժեշտ է նրան կերակրել մայրական կաթով, սկսած Յ-րդ ամսից տալ մրգեղենի հյութ, հաճախ պահել դրսի թարմ օդում և արեւոտ սենյակում։ Երեխայի ճիշտ զարգացման մասին գաղափար կազմելու համար անհրաժեշտ է նրան միշտ կշռել, իսկ ամենից լավ է երեխային պահել կոնսուլ-տացիայի հսկողության տակ։ Սովետական Միության շրջաններում մանկական կոնսուլտացիաների ցանցը բա-վական ընդարձակ է, ամեն մի մայր պարտավոր է ե-րեխային ծնված օրից տանել այնտեղ՝ պատշաճ խոր-հուրդներ ստանալու համար։

Ավելի ուշ հասակի աղջիկների առողջապահու-թյունը քիչ տարբերվում է նախկինից։ Մարմնի մաք-րությունը նույն ձեռվ պետք է շարունակել, ինչպես և վաղ հասակում. անհրաժեշտ է ամեն օր ամբողջ մարմինը և մանավանդ սեռական մասերը լվանալ ջրով։ Եթե սեռական օրդանները չլվացվեն, քրտինքը և սեռական մասերի արտաթորությունը գրգռում են մաշկը և քոր առաջնում։ Պետք է հետեւ աղջկա ստամոքսի և միզապարկի կանոնավոր դատարկմանը, հակառակ դեպքում, երբ սրանք լիքն են, իրենց ճնշու-մով վորխում են արդանդի դիրքը և վերջինս աղջկա ամբողջ կյանքում կարող է թեքված դրության մեջ մնալ։ Հագուստը պետք է լինի ազատ, ոչ մի տեղ սեղմիչ կապեր չպետք է լինեն, որովհետև դրանք ճնշում են մարմնի համապատասխան մասը և խանգա-րում նրա զարգացումը կամ գործունեությունը։ 7—14 տարեկան—դա այն հասակն է, երբ ներքին հյութերի փոփոխման շնորհիվ փոխվում է դեռահաս աղջկա ամ-բողջ էությունը և մարմնի ձեւը. այդ ժամանակ առա-

վել ևս աճող օրգանիզմը չպետք է ծանրաբեռնել Փի-
 ղիկական աշխատանքներով կամ դպրոցի երկարատև
 պարապմունքներով, որոնք կարող են՝ առաջացնել
 արյունսակալություն, ջղայնություն, անկանոն դաշ-
 տան և անկանոն կոնք։ Հիշյալ անկանոնությունից
 խուսափելու համար պետք է դասամիջոցները լինեն եր-
 կար, պարապմունքը մեծ մասամբ բացօթյա, պետք է
 լինեն մարմնամարզություն և խաղեր։ Սրանք ամրաց-
 նում են աղջկա առողջությունը և ուժեղացնում նրա
 օրգանիզմի դիմադրությունը հիվանդությունների
 նկատմամբ։ Պետք է հետեւ ատամների և բերանի
 խոռոչի մաքրությանը, հագնել փակ և ազատ վար-
 տիկ, որպեսզի նախ՝ սեռական օրգանները չփոշուվեն
 և երկրորդ՝ չարորվեն արտաքին սեռական մասերը։
 Գուլպաններին կլոր կապանների դցելը վնաս է, դրանք
 առաջացնում են ոտքերի արյունականդ և երակների
 լայնացում։

2. ԱՐԲՈՒՆԻՑԻ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԻԳԻԵՆԱ

Կնոջ սեռական հասունացումը արտահայտվում է
 առաջին դաշտանով։ Դաշտանի ժամանակ կինը պետք
 է պաշտպանի արտաքին սեռական մասերի խիստ մաք-
 րություն։ Արյունը մազերի վրա խառնվում է մեզի
 հետ, քայքայվում և արձակում վատ հոտ։ այնուհետեւ
 սեռական մասերի մաշկը գրգռվում է և բորբռքվում։
 Վարակը լավ մննդատու միջավայր գտնելով, այդ
 արյան մեջ բազմանում է և բարձրանալով հետոցը,
 արդանդը, փողերը, այնտեղ բորբռքում է առաջաց-
 նում։ Այդպիսի բարդությունից խուսափելու համար
 կինը դաշտանի ժամանակ պետք է ամեն օր սեռական
 մասերն արտաքուստ լվանա գոլ ջրով և օճառով։ Դաշ-
 տանի միջոցին անհրաժեշտ է սեռական մասերը կապել
 թանգիֆի մեջ փաթաթած բամբակով, որը պետք է
 ունենա պարսանդի ձև։ վերջինս իր ծայրերի ժապան
 վեններով առջևից և հետեւից ամրացվում է գոտուն։

Դաշտանի այդ կապը պետք է հաճախ փոխել, ըլանալ, եռացնել, ապա կրկին գործածել։ Դաշտանի ժամանակ վաննա ընդունել կամ լողանալ խորհուրդ չետրվում, սակայն ամբողջ մարմնի մաքրումը և ըլացումը շատ անհրաժեշտ է, դա մեզմացնում է դաշտանի անախորժ զգացումը և ցավերը։ Եթե դաշտանը հարակցվում է ցավերով կամ առատ արյունով, կինը պետք է աղատվի Փիզիկական աշխատանքից և Փիզիկուրուրայից, իսկ եթե արյունը չափավոր է, ցավերը մեղմ են, կինը կարող է շարունակել իր սովորական աշխատանքը։ Որոշ պրոֆեսիաներ, որոնք ազդում են առողջության վրա իրենց թունավոր նյութերով, ինչպիսին են արձիճի, սննդիկի և ներկերի արտադրությունը կամ որոշ արտադրության ժամանակ գոյացող փոշին, — առավել ևս վատ են ազդում դաշտանի միջոցին, որովհետեւ դաշտանի ժամանակ կնոջ դիմադրողականությունը արտաքին ազդակների նկատմամբ ընկնում է։ Գործածել սուր համեմիչ նյութերը և ոգելից խմիչքներ դաշտանի ժամանակ նույնպես չի թույլատրվում։ Սրանք փոքր կոնքում առաջացնում են գերարնություն, որի հետևանքով դաշտանը երկարում է և առատանում։ Դաշտանի ժամանակ (և ընդհանրապես) կինը պետք է հետևի ստամոքսի կանոնավոր գործողությանը, հակառակ դեպքում ստամոքսի ամրության ժամանակ գոյանում են որոշ թույներ, որոնք աղեքից դուրս արտաթրովելու փոխարեն կրկին ներծծվում են արյան մեջ և թունավորում կնոջը, առաջացնելով, գլխացավ, գըշխապտույտ, ախորժակի բացակայություն, սրտախառնություն, փսխումն և այլն։ Դաշտանի ժամանակ մարմինը, մանավանդ ոտները պետք է տաք պահել, ուստի անհրաժեշտ է բացի սովորական հագուստից, հագնել նաև փակ վարտիկ։

Եռուական հարաբերությունը դաշտանի միջոցին անկասկած վնաս է։ Նախ՝ որ սեռական հարաբերության ժամանակ սեռական օրգաններում տեղի է ունենում գերարնություն, որի հետևանքով երկարատես է

դաշտանային արյունհոսությունը, երկրորդ՝
սեռական հարաբերության միջոցին ներս է տարվում
վարակ, իսկ արդանդի լորձաթաղանթը դաշտանի մի-
ջոցին, որպես թարմ, բաց վերք, հեշտությամբ է վա-
րակվում: Կինը կարող է ստանալ սեռական ներքին
գործարանների բորբոքում կամ եղած բորբոքման ու-
ժեղացում: Դաշտանը սեռական գործարանների հայե-
լին է. նրա փոփոխությունը ցույց է տալիս սեռական
գործարանների դրությունը, ուստի յուրաքանչյուր կին
պետք է իր դաշտանի մասին լրիվ տեղեկություն ու-
նենա, պետք է զիտենա առաջին դաշտանը, նրա սո-
վորական ընթացքը, փոփոխությունները (կապված
ամուսնության, ծննդաբերության, վիճումների, և այլ
պատճառների հետ) և վերջին դաշտանը: Եթե այն
տարբերվում է սովորականից, պետք է դիմել բժշկին,
պատճառն իմանալու համար:

Դաշտանի երեալու օրից (մեր երկրում միջին թվով
15 տարեկան հասակում) սեռական գործարանները հա-
մարվում են հասունացած և կինը ընդունակ է հղիանա-
լու, սակայն օրգանիզմի մանավանդ կոնքի, ոսկրերի
լրիվ հասունացում դեռ չի այն կատարվում է
մինչև 20—25 տարեկան հասակը, և քանի որ սեռական
հասունացումը կանգնեցնում է աղջկա ընդհանուր ա-
ճումն, ուստի պետք է խուսափել նաև վաղ սեռական
հասունացումից: Այդպիսի տհաս օրգանիզմի համար
հղիությունը նույնպես մեծ վտանգ է:

Կնոջ սեռական կյանքը կապված է նրա օրգանիզմի
լուրջ փոփոխությունների հետ—հղիություն, կրծքով
կերակրել, մանկան հետազա խնամք և այլն: Սեռական
կյանքի միջոցով կինը կարող է վարակվել վեներական
հիմանդրություններով (սուսանակ, սիֆիլիս, փափուկ
շանկը): Ուստի նախքան այդպիսի քայլ անելը, կինը
պետք է բժշկի միջոցով ստուգի, թե իր և թե այն անձ-
նավորության առողջությունը, որի հետ կապվելու է
սեռական կյանքով: Այդ նպատակի համար ծառայում
են բժշկական հանձնաժողովներ և կանանց կոնսուլտա-

ցիաները, ուր կարելի է ստանալ տեղեկություն թե առողջության և թե ապագա սեռական կյանքի մասին:

Ամուսնության համար ամենից նպատակահարմար է 19—20 տարեկան հասակը, երբ ոչ միայն սեռական օրդաններն են հասունացած, այլև ամբողջ օրդանիզմը: Դրանից վաղ սեռական կյանքը, ապա նաև հղիությունը ու ծննդաբերությունը հյուծում են կնոջ օրդանիզմը, ծնունդը կատարվում է անհամեմատ դժվար, դժվարանում է ծնունդը նաև ուշ հասակում—35-ից վեր: Ժուժկալությունը կնոջ օրդանիզմին վնաս չի հասցնում:

Առաջին հարաբերությունից հետո կուսաթաղանթի մնացորդները, որպես վերք, սոսկալի ցալ են պատճառում կնոջը, ուստի անհրաժեշտ է առաջին հարաբերությունից հետո 5—6 օր ընդհատել սեռական կյանքը, մինչև որ սեռական մասերի վերքերը բուժվեն: Այդ օրերին պետք է արտաքին սեռական մասերը լվանալ գոլ ջրով: Լինում են դեպքեր, երբ բուն հարաբերության միջոցին առաջանում են ոչ միայն կուսաթաղանթի, այլև չեքի, հեշտոցի և նույնիսկ վերջնաղիի պատուվածքներ. այդպիսի դեպքում անհրաժեշտ է անմիջապես դիմել բժշկին, որը արյունահոսությունը կկանգնեցնի և վերքերը կբուժի:

Հարաբերությունից առաջ և հետո պետք է սեռական մասերը լվանալ գոլ ջրով: Հարբած վիճակում հարաբերություն չի թույլատրվում, դրանից երեխաները ծնվում են հիվանդութ: Հարաբերությունն արգելվում է նաև դաշտանի ժամանակ, հղիության սկզբի և վերջին ամիսներին ու հետձննդյան շրջանում. այստեղ նկատի է առնվում թե վարակը և թե հղիության ընդհատումը (վիժումը):

Աղջիկը մինչեւ ամուսնանալը պետք է լինի կենցաղային այնպիսի միջավայրում, որ նա սեռական կյանքի վաղ գրգռումներ, ապա և պահանջ չդդա. ազդվելով շրջապատի վատ օրինակներից, նրա մեջ արթնանում է սեռական կյանքի ցանկությունը, որը նա երբեմն բա-

վարարում է այսպես կոչված օնանիզմի միջոցով
(դա սեռական օրգանների արհեստական գրգռումն է):
Օնանիզմը հետագայում բթացնում է բնական սեռա-
կան զգացմունքը, բորբոքվում են սեռական մասերը,
կինը գառնում է զղային, աշխատունակությունը,
մտածողությունը ընկնում է, դաշտանը դառնում է
անկանոն: Այդպիսի դրությունից աղջկան փրկելու հա-
մար պետք է նրան հեռու պահել վատ սովորություն-
ներից և զբաղեցնել առողջ աշխատանքով:

3. ՀՂԻՈՒԹՅԱՆ, ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ՝ ՀԵՏԾՆԴՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԻԳԻԵՆԱ

Հղիության ընթացքում կնոջ օրգանիզմի աշխա-
տանքը մեծանում է և եթե կինը առողջ չէ, նա դժվա-
րությամբ է տանում այդ ծանրաբեռնվածությունը:
Հղիության ընթացքում երբեմն երևան են զալլա-
սրտի, երիկամների կամ թոքերի հիվանդությունները:
Ցուրաքանչյուր կին հղիության ընթացքում պետք է
հետեւ իրեն այնպես, որպեսզի առողջությունը հղիու-
թյունից չտուժի: Ցուրաքանչյուր կին դաշտանը ժամ-
կետից ուշանալու դեպքում պետք է դիմի կոնսուլտա-
ցիա, ուր բժիշկը կորոշի՝ հղի՞ է նա, թե ոչ, ապա՝
հղիության դրությունը, կքննի սիրտը, թոքերը, երի-
կամները և այլ օրգանները, կոնքի չափերը և ըստ այնմ
էլ խորհուրդ կտա պահպանել պտուղը, թե վիճել
այն: Դրանից հետո հղի կինը պետք է մնա կոնսուլ-
տացիայի հսկողության տակ նաև հետագա ամիսնե-
րում, որովհետեւ կան հիվանդություններ, որոնք մեծ
մասամբ արտահայտվում են հղիության վերջին ամիս-
ներին:


Հղին պետք է շարունակի իր սովորական աշխատան-
քը, սակայն եթե նա ունի այնպիսի հիվանդություն-
ներ, որոնց պատճառով կինը հետությամբ է վիժում,
անհրաժեշտ է գոնե առաջին ամիսներն ազատվել աշ-
խատանքներից, մինչեւ որ ձուն ամուր կզչի արգանդին:

Ֆիզիկական շարժումները մարզում են մկանները, լավացնում սրտի, թոքերի և աղիների աշխատանքը: Հղին պետք է օրական մի քանի ժամ անցկացնի բացօթյա զբոսանքում, սակայն զբոսանքից չպետք է հոգնեցնի իրեն: Ծանրություններ բարձրացնելը, ծանր լվացքը, ոտքի մեքենայի աշխատանքը, հեծանիվով, սայլով փոխադրվելը և ոտով երկար ճանապարհ գնալը կարող են վիժում առաջացնել:

Ընդհակառակը, սպորտի թեթև տեսակը թույլատրվում է, այն էլ հղիության 2-րդ կեսից, երբ ձուն բավական ամուր կազմ է արգանդի պատին: Լողանալ խորհուրդ է տրվում ոչ շատ տաք և ոչ շատ սառը ջրում. հղին պարտավոր է հետեւ մարմնի մաքրությանը, մաշկը լվանալ ամեն օր, եղունգները մաքրել, վաննա ընդունել հղիության 2-րդ կեսից, գլխի մազերը լվանալ շաբաթը մեկ-երկու անգամ, արտաքին սեռական մասերը լվանալ ամեն օր, ներլվացում կատարելու կարիք չկա, անհրաժեշտության դեպքում միայն բժշկի ցուցմունքով:

Հղիները վտանգի ենթակա են նաև որոշ արտադրություններում աշխատելիս: Դրանք են գլխավորապես ծիսախօտի, մկնդեղի, արճիճի և սնդիկի արտադրությունները: Սրանք թունավորում են կնոջ արյունը, պտուղը մահանում է և առաջանում է վիժում կամ վաղաժամ ծնունդ: Վարակից, փոշուց ազատվելու համար անհրաժեշտ է ուտելուց առաջ ձեռքերը լվանալ օճառով, հաճախակի լվանալ նաև մազերը: ՍՍՌՄ ապահովել է կնոջ առողջությունը արտադրության մեջ. հղիության հինգերորդ ամսից հատուկ օրենքներով արգելվում է գիշերային աշխատանքը:

Հղիների սնունդը պետք է լինի չափավորված, առաջին հերթին պետք է սահմանափակել մոի և աղի գործածությունը, մանականդ հղիության վերջին երկու ամսում, բոլորովին արգելել ոգելից խմիչքները: Հղի կնոջ համար ամենիո օգտակարն է կաթնեղենի, մրգեղենի և կանաչեղենի գործածությունը, որովհետեւ



գրանք հեշտ են մարսվում, թունավոր նյութեր քիչ են առաջացնում և միաժամանակ տալիք են հատուկ տեսակի օգտակար նյութեր (վիտամիններ), որոնք հատկապես լավ ազդեցություն ունեն նոր աճող պտղի զարգացման վրա: Զրի գործածությունն ավելի լավ է, որովհետեւ շատ ջուր գործածելիս արտադրվում է շատ մեղ, իսկ մեղի հետ դուրս են գալիս արյան թույները: Եթե հղիները տառապում են սրտախառնությամբ և փսխումով, պետք է ուսուլ քիչ-քիչ, հանդիսաւ և նույնիսկ պառկած վիճակում: Սովորաբար այդ երկույթը տեսում է առաջին 2—3 ամսում, ապա անցնում է: Եթե այդ միջոցները չեն օգնում, հղին պետք է դիմի ծննդատուն՝ օգնություն ստանալու համար:

Ստամոքսի ամբությունների դեմ լուծողական գործածելը նպատակահարմար չէ. ավելի լավ է ամեն առավոտ, դեռ ոչինչ չկերած, խմել մեկ-երկու բաժակ սառը ջուր, գործածել միբու և կանաչեղեն, հարկավոր դեպքում անել մաքրող կլիզմա 2—3 բաժակ ջրով: Փտած ատամները հղիության ընթացքում պետք է բռնթել, ատամները մաքրել խողանակով և ատամի փոշով: Հակառակ դեպքում ծննդից հետո այնտեղի վարակը կարող է առաջացնել զանազան հիվանդություններ:

Հղի կնոջ հագուստոր պետք է լինի աղատ, սեղմիչ կապեր չպետք է լինեն ոչ մի տեղ, մանավանդ որով վայնի վրա: Այն կրկնածինների մոտ, որոնք ունեն կախ ընկած փոր, խորհուրդ է տրվում հղիության 2-րդ կեսից որովայնը կատել բանդաժայլ, բանդաժը պետք է կապել առափույքն, պառկած ժամանակ, դիշերները կրկնին արձակել: Որպեսզի սեռական մասերը պահպանվեն փոշուց, անհրաժեշտ է հազնել փակ վարտիկ, գուլպաների կարպանները պետք է ամրացվեն լիֆչիկն և ոչ թե օղաձև կապվեն ոտներին:

Հղին պետք է հոգ տանի նաև իր ստինքների մասին. նա պետք է նախապատրաստի նրանց՝ երեխային

կերտելու համար; Առանց նախապատրաստելու, ծննդից հետո, երբ երեխան սկսում է ծծել, պտուկները ճաքում են և յուրաքանչյուր անդամ ծծելիս առաջացնում սաստիկ ցալեր: Բացի դրանից, այդ ճեղքերից վարակը կարող է ներս թափանցել և առաջացնել ստինքների բորբոքում: Այդպիսի բարդությունից խուսափելու համար կուրծքը պետք է ամեն օր լվացվի գոյ ջրով, օճառով ու չորացվի:

Սեռական կյանք հղիության ընթացքում լավ է որ չլինի, որովհետև դրա միջոցով ներս է տարվում վարակ, բացի դրանից, կարող է տեղի ունենալ վիժում կամ վաղաժամ ծնունդ: Այնուամենայնիվ, եթե անհնարին է դա բոլորովին կանխել, ապա պետք է հարաբերություն ունենալ սակավ, և միայն չորրորդից մինչև յոթերորդ սամսում:

Ինչպես վերևում ասացինք, հղին պետք է հաճախի կոնսուլտացիա, իր դրության մասին տեղեկություններ և խորհուրդներ ստանալու:

Ծննդաբերական ցավերը սկսվելուն պես կոնսուլտացիայի թերթիկով գնում է ծննդաբերական տուն՝ ազատվելու, ուր այդ գործի համար կան փորձված բժիշկներ, մանկաբարձուհիներ և անհրաժեշտ հարձարություններ: Իսկ եթե այլ և այլ պատճառներով ծնունդը կատարվում է տանը, ապա պետք է աշխատել, որ վարակ չմտնի սեռական գործարանները. այդ տեսակետից ծնունդը պետք է ընդունի ոչ թե տառմայրը, այլ մանկաբարձուհին: Տառմայրը, գաղափար շունենալով վարակի մասին, կեղտոտ ձեռներով վարակում է ծննդկանին: Ծննդաբերը պետք է կլիզմայով մաքրի իր աղիքը, լվանա արտաքին սեռական մասերը և եթե ջրերը չեն գնացել՝ լողանա տաք ջրում, ապա պառկի մաքուր լվացած և հարթուված սպիտակեղինով:

Ծննդից հետո անհրաժեշտ է 6 չարաթ, մինչև որ սեռական օրդանները հասնեն իրենց նորմալ, ոչ հղի գրության: Այդ ժամանակ նույնպես պետք է հոգ տա-

նել, որ ծննդկանը չհիվանդանա, ուստի այստեղ ևս
անհրաժեշտ է հատուկ խնամք:

Ծննդաբերության ժամանակ, եթե սեռական մա-
սերի պատովածքները սակավ են, քերծվածքներ ու
փոքր ճեղքեր միշտ էլ լինում են: Արգանդի խոռոչը,
որտեղից ընկել է ընկերքը իր մասերով, նույնպես մի
ճեծ վերք է, որն ամեն մի բոպե ենթակա է վարակ-
ման: Կինը հետծննդյան շրջանում պետք է բոլորովին
մաքուր պահի թե սեռական մասերը և թե ամբողջ
մարմինը: Եթե կինը ծննդատանն է, մաքուրթյանը
հետեւում են բժիշկն ու մանկաբարձուհին: Վերքերը
մաքուր պահելով, հեշտությամբ են բուժվում: Եթե
ծննդկանը տանն է, նույն խնամքը կատարում է ինքը:
Օրը երկու անգամ պետք է եռացրած գոլ ջրով լվաց-
վեն արտաքին սեռական մասերը, դրա համար եսմար-
խյան սկահը մոտ 2 լիտր եռացրած գոլ ջրով կախում
են պատից, որտեղից ռետինե խողովակով ջուրը բաց են
թողնում սեռական մասերի վրա, ինքը պառկում է
մեջքի վրա, ապարահեղը դնելով հետույքի տակը:
Ծննդկանին չի թույլատրվում անգամ մաքուր լվացած
ճեղքերով սեռական մասերին ճեղք տալը: Մարմնի մը-
կանների ամրացման տեսակետից երկար, 2—3 շաբաթ
պառկելը վնաս է, սակայն վաղ վեր կենալը և աշխա-
տանքի անցնելը նույնպես վնաս է: Ուստի լավ է, որ
ծննդկանն անկողինը թողնի առաջին շաբաթվա վեր-
ջին, իսկ 4-րդ օրից սկսած, նա կարող է նստել և
բժշկի ցուցմունքով կատարել որոշ մարմնամարզու-
թյուն: Բացի սեռական մասերը մաքուր պահելուց,
անհրաժեշտ է նաև ամբողջ մարմինը շփել ջրով, լողա-
նալ թույլատրվում է և շաբաթից ոչ շուտ: Ծննդից
հետո մինչև 4—5 օր թույլատրվում է ուտել թեթև
աննդանյութեր, որից հետո եթե իրեն դգում է առողջ,
կարող է ընդունել ամեն ինչ, բացի կծու և ոգելից
խմիչքներից, որոնք անցնում են կաթի մեջ և պակա-
սեցնում կաթի քանակը: Մտամոքսի ամրության դեմ
պետք է դործածել կանաչեղեն, մրգեղեն, կաթնեղեն,

իսկ եթե ստամոքսը չգործի, մաքրող կլիզմա: 3 շաբաթից հետո ծննդկանը պետք է ամեն օր մի քանի ժամ լինի թարմ օդում: Երեխային կերակրելուց առաջ և հետո անհրաժեշտ է պտուկները մաքրել բորաթթվի 2 տոկոսանոց լուծույթով (մեկ թեյի գղալ բորաթթվի քյուրեղներ մեկ բաժակ տաք ջրին):

4. ԿԼԻՄԱԿՏԵՐԻԿ ՇՐՋԱՆԻ ԵՎ ԾԵՐՈՒԹՅԱՆ ՀԻԳԻԵՆԱ

Կինն իր թարմ շրջանից հետո, անցնում է մի անցողիկ շրջան (կլիմակտերիկ), ապա ծերության: Անցողիկ շրջանն այն հասակն է (մոտավորապես 45—48 տարեկան), երբ սկսում են թառամել կնոջ ձվարաններն ու նրա օրգանիզմի հյութերի մեջ առաջ է գալիս զգալի փոփոխություն, որի շնորհիվ դաշտանը դառնում է անկանոն և ի վերջո իսպառ դադարում է. առաջանում է գլխապտույտ, գլխացավեր, քրտինք, զգացվում է մերթ սառնություն, մերթ տաքություն և սրտի թրթուց: Անցողիկ շրջանից հետո վերահաս ծերության շրջանը վերջ է տալիս այդ անկանոն երևույթներին և կինը ընկնում է մի նոր հոգեկան ու մարմնական հայլասարակուության մեջ, որի ժամանակ նազգվում է դաշտանից և առհասարակ սեռական մասերի որևէ արտադրությունից: Կլիմակտերիկ շրջանի այդ երևույթները կարելի է մեղմացնել՝ մարմինը ջրով շիելով, տաք վանսաներով ու թեթև աշխատանքով: Հետեւել ստամոքսի կանոնավոր գործողությանը, խոռափիել ողելից խմիչքներից և ուտելը դարձնել չափավոր:

Կինը կլիմակտերիկ և ծերության շրջանում, բացի նրանից, որ պետք է հետեւի մարմնի մաքրությանը, գլխավորապես պետք է ուշադիր լինի, սեռական մասերից արտադրության: Այդ հասակում դրա երևալը չարորակ նորակազմության մեջ կասկած է հարուցում. գլխավորապես սա վերաբերյալ է արգանդի քաղցկեղին (ռակ):

ԱՐԴԱՆԻԻ ՔԱՂՅԿԵՐ

Քաղցկեղը շատ տարածված հիմանդրություն է, նա սոցիալական չարիքի բնույթ է ընդունում. գրեթե յուրաքանչյուր 10 մարդուց մեկը, մահանում է քաղցկեղից: Կանայք հիմանդրանում են քաղցկեղով գրեթե երկու անգամ ավելի շատ, քան տղամարդիկ: Քաղցկեղը վնասում է կնոջ սեռական օրգանների բոլոր մասերը, սակայն ամենից հաճախ վնասում է արգանդի վզիկը (90—94,5 տոկոս): Արգանդի քաղցկեղը վնասում է կանանց մեծ մասամբ 35—52 տարեկան հասակում:

Քաղցկեղի բուն պատճառը հայտնի չէ, կան միայն ենթադրություններ: Զարգանում է սաղմնային հյուսվածքից կամ նորմալ բջիջներից, անընդհատ գրգիռների հետևանքով: Նշանակություն ունի նաև ժառանգական նախատրամադրությունը: Արգանդի քաղցկեղը, աճելով, խիստ քայլայում է օրգանիզմի նորմալ հյուսվածքները և օրգանները, միաժամանակ քայլայվում է և ինքը ու խոցոսվում, առաջացնելով արյունահոսություններ և գարշելի հոտ: Քաղցկեղը տարածվում է հեռավոր օրգաններում նաև արյան ու ավիշի միջոցով:

Քաղցկեղը իր արտադրած հյութերով թունավորում է օրգանիզմը ու խանդարում օրգանների նորմալ գործունեությունը. քաղցկեղը չբուժվելու դեպքում անպայման մահ է առաջանում:

Քաղցկեղը բուժելի է և հնարավոր է նրանից փրկվել, եթե ժամանակին դիմեն բժշկական օգնության: Բնակչության մեջ տարածված է այն կարծիքը, թե քաղցկեղը անբուժելի հիմանդրություն է: Այդ կարծիքը սխալ է: Վիճակագրական տվյալները հաստատում են, որ արգանդի վզիկի քաղցկեղը ժամանակին կատարված օպերացիայի դեպքում տալիս է 35 տոկոս կայուն առողջացում, արգանդի մարմնի քաղցկեղը →

46 տոկոս։ Գրեթե նույնը ստացվում է նաև ռենտգենյան և ռադիումի ճառագայթներով բուժելիս։

Որո՞նք են արգանդի քաղցկեղի, վաղ նշանները, որոնց երևալու դեպքում կինը պետք է անհապաղ դիմի բժշկին։

Կանանց հիվանդությունների դլսավոր նշաններն են—ցավ, սպիտահոսություն, արյունհոսություն։ Սակայն քաղցկեղի ժամանակ ցավերը առաջանում են շատ ուշ, երբ հիվանդությունը բավական զարգացել է և արդեն անբուժելի է։ Հիմնական նշանը արյունհոսությունն է սեռական օրգաններից։ Նույնիսկ շատ քիչ, մի քանի կաթիլ արյունհոսությունը սեռական օրգաններից, հարաբերության ժամանակ, ներըլացում կատարելիս, կամ առանց ակնհայտ պատճառի, միշտ պետք է քաղցկեղի կասկած հարուցի։ այդպիսի արյունհոսությունը քաղցկեղի նկատմամբ խիստ կասկածելի է մանավանդ կլիմակտերիկ և ծերության շրջանում։ Քաղցկեղի նկատմամբ երկրորդ նշանը—դա սպիտահոսությունն է սեռական օրգաններից։ Սպիտահոսության առաջանալը, նրա ուժեղացումը, նրա ընույթի փոփոխումը միշտ պետք է կասկած հարուցի քաղցկեղի նկատմամբ։ Անհատական հիգիենային հետեւկելը և բժշկին ժամանակին դիմելը կկանխի քաղցկեղի զարգացումը։ Քաղցկեղի նկատմամբ գոյություն ունեն նաև այլ, ավելի բարդ նշաններ, սակայն դրանք կհետաքրքրեն միայն մասնագետ բժիշկներին։

Հետեւելով անհատական հիգիենայի կանոններին, կինը դրանով իսկ կպահպանի իր առողջությունը, իսկ որոշ դեպքերում նաև իր կյանքը։

Այսպիսով մենք աեսնում ենք, որ կինը իր գոյության ընթացքում անցնում է մի քանի շրջան։ Նրա կյանքը խիստ երերուն է և տարբեր ժամանակաշրջանում ու տարբեր աշխատանքի ու կենցաղի պայմաններում պահանջում է հատուկ խնամք։ Սակայն միայն թված պահանջների անհատական բավարարումով չեն լուծվում նրա առողջապահության խնդիրները։ Առողջ

մայրելու ունենալու, հասարակությանը լիարժեք անդամ
տալու խնդիրը իրագործվում է ոչ միայն անհատական
հիգիենայով, այլ նաև ամբողջ մասսայի առողջացու-
մով, ստեղծելով աշխատանքի ու կենցաղի համապա-
տասխան պայմաններ, որին արդեն վաղուց ի վեր ողջ
աշխարհում ձեռնամուխ է եղել միայն Սովետական
Միությունն իր բազմաթիվ կոնսուլտացիաների, ծնըն-
դաբերական տների, մոռների, կնոջ իրավահավասա-
րության, կուլտուր-լրտեսական պահանջների բավարար-
ման, արտադրության մեջ ներգրավվման ու այլ բազ-
մաթիվ միջոցառումներով:

Առողջապահության Մինիստրության Սահ-Կուսածին



Ք.Ֆ. 10949. Պատվեր № 104. Տիրաժ 5000. Տպագր 11/2 մամ. հեղ. 0,9 մամ.
Ստորագրված է տպագրության 1946 թվի հունիսի 25-ին:

ՀՍՍՀ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատ. Վարչ. տու.

Հ. 1 Երևան 1946 թ.,

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0029124

A II
1644

ԳԻՆԸ 50 կ.